# Արձանագրություն N 21/4-2

**"ՔԵՆԴԼ – ԳՀԱՊՁԲ - 21/4"** ծածկագրով մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 15 հոկտեմբերի 2021թ. ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ) | Գ. Ցականովա, |
| Գնահատող անդամ (ԳԱ)՝ | Ա. Պետրոսյան, |
| Բացող անդամներ (ԲԱ)՝ | Ստ. Թաթիկյան, Մ. Գյուլումյան, |
| Հանձնաժողովի քարտուղար (ՄՀմ)՝ | Ա. Բաղրամյան |

### 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Գ. Ցականովա)

Հաստատել նիստի օրակարգը՝

ա/ ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու մասին Պատասխանատու ստորաբաժանման Հայտը պատրաստած աշխատակցի ներկայացրած հիմնավորումը.

բ/ գնահատող հանձնաժողովի որոշումը՝ Ընթացակարգը լուծարելու մասին:

### 2. ՊՍ աշխատակցի ներկայացրած հիմնավորումը

(Գ. Ցականովա)

**"ՔԵՆԴԼ – ԳՀԱՊՁԲ - 21/4"** ծածկագրով մրցույթի 12-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացվել է թերություններով, որոնք էական ազդեցություն ունեն ձեռք բերվող ապրանքի (Լաբորատոր նյութեր-գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար) բնութագրում: Դա կառաջացնի տարըմբռնում մրցույթի մասնակիցների մոտ: Առաջարկվում է կատարել փոփոխություններ 12-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում:

### 3. Հանձնաժողովի որոշումը 12-րդ չափաբաժնի վերաբերյալ

(Գ. Ցականովա)

Արձանագրելով սույն նիստի արձանագրության 2-րդ մասով ներկայացված հանգամանքները, հիմք ընդունելով Գնումների մասին ՀՕ-21-Ն օրենքի հոդված 29-ի 4-րդ կետի պահանջը (Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ Հրավերում կարող են կատարվել փոփոխություններ) և հաշվի առնելով, որ հայտերի ներկայացման վերջնաժամկետին մնացել է 4 օրացուցային օր՝ հանձնաժողովը որոշեց.

## որոշում թիվ 21/4-2

"Լուծարել ընթացակարգը և մրցույթը հայտարարել Չկայացած՝ Գնումների մասին ՀՕ-21-Ն օրենքի հոդված 37-ի 2-րդ մասի հիմքով և նույն օրենքի հոդված 29-ի 4-րդ կետի պահանջի կատարման անհնարինության պատճառով":

կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Գոհար Ցականովա

Անդամներ՝ ____________ Արմեն Պետրոսյան

____________ Ստեփան Թաթիկյան

____________ Միքայել Գյուլումյան

Քարտուղար՝ ____________ Արծրուն Բաղրամյան